

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՇԱՐԱՀԱՐՅԱԼ, ՀՐԱՄԱՆԱՎ ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐ ԵՎ ԾԻՐԱՆԱԾԻՆ  
ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՅՍԵՐ՝ ԼԵՎՈՆԱՐԱՄԱՍՏՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱԼ  
ԼԵՎՈՆ ԿԱՅՍԵՐ ՈՐԴՈՒ, ՍԿՈՅԱԼ ԱՅՆՏԵՂԻՑ, ՈՐՏԵՂ  
ԱՎԱՐՏԵԼ Է ԹԵՈՓԱՆԵՍԸ, ԲՅՆ Է՝ ԼԵՎՈՆ ՀԱՅԿԱԶՆԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՍԻՆՁԵՎ ԹԵՈՓԻԼՈՍԻ ՈՐԴԻ  
ՄԻՔԱՅԵԼ ԿՈՒՐԱՊԱՂԱՏ՝ ԿԱՅՍԵՐ՝

## Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Զ Ի Ն

Ինչ վերաբերում է յուրաքանչյուր գրքի բովանդակությանը, ապա  
նույն այն Կոստանդին կայսրն է<sup>3</sup>, որ բարեխղճությամբ կազմել և մատ-  
չելի ձևով շարադրել է, որպեսզի կազմողների համար պարզ դառնա.....  
թագավորության<sup>4</sup>:

Բոլոր դեպքերում, ով ամենախմաստուն կայսր<sup>5</sup>, քո ազնվությունն է,  
որ քո բարի և այլ բազում և մեծ գործերի, այդ թվում և ժամանակի ըն-  
թացքում անգոյություն մատնվածները վերստին կյանքի կոչելու և վերա-  
կենդանացնելու քո ցանկության կարգին, կամեցար մի գործ էլ կատարել՝  
հոգալ պատմության մասին, որպեսզի մոռացության գիրկը չանցնեն  
անցյալում թագավորական գայիստին տիրացած մարդիկ: Թեև նրան-  
ցից ոմանք նախանձախնդրությամբ բարին են գործել, սակայն նրանց  
[կենսագրությունն] անիրավացիորեն գրի չի առնվել: Ոմանք ջանացին  
սովորական մարդկանցից ոչնչով չտարբերվել, նրանք հանդես եկան  
որպես պատմության ոչ բարեկամներ և իրենց անտաշությամբ ծաղրի  
առարկա դարձան<sup>6</sup>: Արդ, ի՞նչ պետք է անի կայսրը, որպեսզի գրավոր  
խոսքով օգուտ տա: Նա պետք է հոգատարություն ցուցաբերի [գիտուն]  
մարդկանց նկատմամբ, հատկապես պատմական գիտության, քանզի  
դրանց մեջ է թագավորության ուժը, որպեսզի դատողությունը կորցրած,



զառիվայր ընթացող մարդիկ շտապվեն, քանզի [դեպքերը] լուսնյան մատնելով, կվտանդվի այն, ինչով մենք տարբերվում ենք ամեն ինչից:

Այն, ինչ դու կատարել ես, ով ամենասիրելի կայսր, պատմական [գիտության] ու [գիտուն] մարդկանց նկատմամբ հոգատարություն ցուցաբերելու ուղղությամբ (որպեսզի հատուկ կանգ չառնեմ մյուս արարքներիդ վրա), թող իմաստուն այրերն ասեն, թեպետև դու բոլորից իմաստուն ես: Պատմողը հենց դու ես, մենք պարզապես քեզ ծառայող ձեռքեր ենք, անցյալի դեպքերի մասին դու ես պատմում, անգամ եթե դրանք շատ հոռի են և ոչ փայլուն, քանզի խոհեմ մարդիկ վատից էլ կարող են օգուտ քաղել: Դու, անտարակույս, ամեն տեսակի զբաղմունքից ու հանգստից գերադասեցիր պատմական գիտությունը, քանզի ուսումնասեր ու պատմություն սիրող հպատակների մեջ ամենից շատ դա է ջերմեռանգություն և առաքինություն առաջացնում: Դու պատմության նյութը քաղեցիր գրավոր և բանավոր աղբյուրներից և բարվոք խորհեցիր, ի դեմս պատմության, բոլորի համար ինչ-որ հասարակաց դպրատուն ստեղծել: Դու գտար, որ ամենից նպատակահարմար է այդ պատմությունն սկսել այնտեղից, որտեղ որ ավարտել էր երանելի Թեոփանեսը: Ձեր [պատմությունների] նմանությունն ու մոտիկությունը վկայում են, որ նրա գործի շարունակողն ես դու և քո [գրածով] հույժ պանծացնում ես նրան և փոխադարձաբար նրանից ինչ-որ փայլ ստանում:

[Թեոփանեսն] իր պատմությունը հասցրեց մինչև կուրապաղատ Միքայել կայսեր թագավորությունը<sup>8</sup>, իր մարդկանց դավաճանության հետևանքով բուլղարներից կրած նրա պարտությունը: Նա հիշել էր Լևոնի<sup>9</sup> գահ բարձրանալը միայն, և ոտանց ընթերցողներին պարզելու նրա որտեղից սերելու, ստացած կրթության մասին: Իսկ մենք, կարծես գլխին հարմարեցնելով [մարմնի] մնացած մասերը, պատմությունը ներկայացնում ենք ամբողջական և ոչ անկատար և այն փոխանցում մոտ ու հեռու ապագայի փութեռանդ մարդկանց, նրանց օգուտ և ոչ վնաս ընձեռելով, քանզի կյանքի լավն ու վատը գիտենալը շահեկան է, դա սխալների առաջն է առնում: